

«Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը մայրության դպրոցների կազմակերպման կապակցությամբ 03.08.2017թ.

«Կառավարության որոշմամբ մոր և մանկան առողջության պահպանման ռազմավարությանը համապատասխան, 1998թ. ստեղծվել է մայրության դպրոցներ, որոնց թիվը 2017թ. դրությամբ 100-ն է:

Արագածոտնի մարզում մայրության դպրոցների գործունեության արդյունավետության նպատակով ես՝ Արագածոտնի փոխմարզպետ, գենդերային հանձնաժողովի նախագահ Նունե Մովսիսյանս, մարզպետարանի առողջապահության վարչության պետ Արտյոմ Պետրոսյանը, առողջապահության բաժնի պետ Սիլվա Թադևոսյանը, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գայանե Դանիելյանը, գինեկոլոգները, մանկաբուժները հանդիպում ենք մարզի չորս տարածաշրջանների հղիների հետ:

Քաղաքակիրթ հասարակությունում ապագա մայրիկը պիտի անպայման կիրթ տեղեկատվություն ստանա, որպեսզի հղիությունը ճիշտ վարի, հոգեբանորեն պատրաստ լինի որոշակի փոփոխությունների, ծննդաբերության ժամանակ օգնի բժշկին իր պատրաստվածությամբ, կերակրի բալիկին բժիշկների խորհրդով, պահի անհրաժեշտ կապը կանանց, մանկական կոնսուլտացիաների հետ:

Մայրության դպրոց հաճախած մայրերի հետ տարված աշխատանքի արդյունքում Արագածոտնի մարզում նորածնի մահացության դեպք չի գրանցվել:

Հինգ տարբեր թեմաներով՝ ըստ հղիության չափի, ձեզ հետ դասընթաց կվարեն բժիշկները: Խմբակային այս պարապմունքներին կլսեք հարցեր, պատասխաններ, կմտերմանաք, կոգևորվեք մեկդ մյուսի փորձով ու վստահ, հոգեբանորեն պատրաստ կգնաք ծննդաբերության: Այսօր կխոսենք նաև ծնողի արձակուրդի, երեխայի նպաստների տրամադրման կարգի մասին:

Գենդերային և առողջապահական ոլորտի ինչ հարցեր էլ որ բարձացվեն այս հանդիպումների ընթացքում, մենք սիրով լուծում կտանք: Մարզպետարանի կառույցները մշտապես պատրաստ են ձեզ աջակցելու: Մարզը մեր մեծ ընտանիքն է, և յուրաքանչյուր մանկան ծնունդը՝ բոլորիս ուրախությունը: